

անոնց համար , և անդադար աղաչելու որ տայ փոխարէնը իր յաւիտենական գանձէն ըստ բարի և հայրենասէր ջանից նոցա :

„ Երբեք մէ 'ի զատ ճշմարտութիւն մ'ալ կ'ուզեմ ըսել ձեզի , սիրելի և բարի որդիք : Զկարծէք թէ ձեր գիտնական աշխատանացը վերջը հասաք . ասկէ ետքը ձեր բուն ուսումնական աշխատանքը պիտի սկսի : Երբեք հիմայ մարդկային գիտութեանց միայն սկզբունքներուն մէջ վարժուեցաք , որոնք անսահման կը տարածուին : Գիտութիւնը թէ որ սահման ունի նէ , միայն սոցիալական գիտէն կը տեսնուի : Ես սահմանը դուք կ'ոտրեցիք և կ'ոտրենք որքերնուդ տակը առնելով՝ գիտութեան և ծանօթութեանց երկիրը հասաք : Երբեք մը աչքերնիդ վերուցէք ու տեսէք ձեր հորիզոնը , որ ինչ զուարճալի երկրի մէջ հասեր էք բարեբաղդութեամբ : Հոս պիտի գտնաք հոգւոյն ամէն զուարճութիւնը և ամէն մխիթարանքը՝ որչափ որ աշխարհիս մէջ Երեւանիսման մարդու շնորհեր է , բայց հրամայեր է որ առանց աշխատանքի մարդս այս բարիքը չվայելէ :

„ Ուստի պատրաստ եղէք քաջութիւն և սիրտ առէք ձեր ազնիւ դաստիարակներուն գովելի օրինակէն . ինչպէս որ իրենք յուսով համբերութիւն և յարատեւութեամբ ամէն դժուարութիւնները և պարագայից հակառակութիւնները կտրձուցեմք յաղթեցին և յառաջագիւղ եղան զանազան վարժութեանց մէջ , դուք նաև ասոնց նման ըլլաք . որպէս զի ոչ միայն պատիւ ըլլաք ձեր անձին՝ ձեր վարժարանին՝ ձեր ծնողացը , հապա մեր սիրելի ազգին ալ , որ բովանդակ յոյսը և իր խնդալի ապագայն ձեր վրայ դրած ըլլալով՝ անհամբեր ձեզ կրսպասէ : Երբեք , ձեզմէ և ձեզի նմաններէն կըսկսի մեր տառապեալ ազգին նոր օրը և նոր դարը : Պատմագիրը արդէն սկսաւ զուարթ գրելով զրել ձեր անունը ոսկեզօծ մատենագրքին վրայ առ 'ի յիշատակ յաւիտենական գովեստի : Երբեք է ձեր մէջը որ արժանապէս չպա-

տասխանէ ազգային կոչմանը , և անհոգ կենալով չարունակէ իր բարի ձեռնարկութիւնը : Երբ հոգին կը վրկայէ որ ոչ ոք կայ ձեր մէջը անհոգ ազգին խնդիրքը կատարելու , հապա իւրաքանչիւր ոք վառեալ կը տեսնենք բարի նախանձով ջանալ արժանի ըլլալու գովեստներու պսակին , :

ԺԱՄԱՆԱԿԱԿՈՒՅ ԴԻՊՈՒԱԾ

Երբեք մը Գար :

ՊԱՌԱՒԻՆ մէկը իր գեղէն քաղաք գնացած ըլլալով , ծախած բաներուն գինը , 120 Ֆռանք , լաթի մը մէջ կը պլլէ զգուշութեամբ ու իշուկին վրայ սապատին մէջ կը տեղաւորէ՝ գեղը կը դառնայ : Տուն հասնի տեսնէ որ ստակը չկայ . կը շփոթի խեղճ կինը , կուլայ կ'ողբայ , գլխուն եկած փորձանքը կը պատմէ դրացիներուն . երկրորդ օրը կը դառնայ քաղաք , կ'ըսէ դատաւորին , ուրիշ գեղերը կը հարցնեն , բայց անօգուտ :

Երկու օրէն ետքը գեղացի մը կ'ելլէ դիմացը յոգնած դադրած , կը նայի երեսը , “ Հարիւր քսան Ֆռանք կորսնցրնողը հրամանքդ ես , կ'ըսէ : — Ենչ ըսել է , ես եմ . փնտռելով փնտռելով հոգիս բերանս եկաւ , ” կ'ըսէ պառաւր : — Եմին ալ զքեզ փնտռելով հոգիս բերանս եկաւ , կ'ըսէ գեղացին . երեկուրնէ 'ի վեր ետեւէդ կը վազէի . ան ստակդ մարիկ , գնա վայելէ ու իս այսչափ վազցրնելուդ վրայ ալ ուրախացիր , :